

իւր, զի բազում փափազանաւ խնդրեմք ի ձեռք լաւազացդ յիշել արտատուայից հառաչմամբ զվերոգրեալքս ի սմա. եւ ինքն որ առաւան է ի տուրս բարեաց Տէր մեր Յիսուս Քրիստոս ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոցս առհասարակ ողորմեսցի եւ որ դամենն ասէ. ամէն: Գրեցաւ ի թվականիս Հայկաղեան տումարի Զ. եւ ԻԵ. (1476): Զժառանգորդ սուրբ աւետարանիս զՄանուէլ, զԹաթէոս, զՄեղիսէզ, զՄեսրոբ, զՄարուք եւ զԱբրահամ, զՄաթէոս, որք վայելէք զսուրբ աւետարանս լաւ խնամով պահեցէք եւ Աստուած զձեզ պահէ յամէն փորձութենէ. ամէն: Արդ ես յոգնամեզ եւ անիմաստս ի մանկունս եկեղեցոյ անարհեստ գծագրող սուրբ աւետարանիս անարժանս ի քահանայս Ստեփանոս հանդերձ ծնաւազաւք իմովք յիշման արժանի առնել եւ Աստուած զձեզ յիշէ առհասարակ. ամէն»:

2. Էջ 68բ. «Ո՛վ հանդիպողք սուրբ աւետարանիս յիշեցէք զՆերսէս Երէցն, որ ետ ծաղկել զաւետարանս ի յիշատակ Խաւճա Իպրէհիմին, եւ որ յիշէ, յիշեալ լիցի յիւր միւսանգամ գարտեանն. ամէն»:

3. Էջ 112բ. «Ծագկեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ ըՍտեփաննոս եպիսկոպոսի, ի վանքս Առնշուց ի դառն եւ ի նեղ ժամանակիս, զի գնաց Հասան բէկն եւ գերեաց զՎնաստուն (զՎրաց տուն) թվ. ԶԻԶ (1477):

4. Էջ 259. «... Արդ ես անարժան եւ յոգնամեզ եւ փժուռն եւ անարհեստ զգրէչս Ստեփաննոս սկսայ գծագրել ի վանս հրաշալի Այրիվանս»:

5. «... Արդ ես յոգնամեզ եւ անիմաստս ի մանկունս եկեղեցոյ անարհեստ գծագրող սուրբ աւետարանիս անարժան ի քահանայս Ստեփաննոս հանդերձ ծնաւազաւք իմովք յիշման արժանի առնել»:

ՅԻՇԱՏԱՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՍՈՒՆՈՒՆԵՐԻ
 ցողներէ 1. Էջ 111բ. «Զվերջին ստացող սուրբ աւետարանիս զհեղահոգիք հայրն զՏէր Մուքայէն եւ զկողակիցն իւր զՆսէֆսուլթանն, որ ստացան զսա ի հալալ արդեանց իւրեանց յիշատակ հոգւոյ եւ ծնողաց իւրոց Տէր Յակոբ քահանան եւ զԹաղումաշն եւ որդիքն Սարգիսջանն եւ զՀունդուբէկն յիշեցէք: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զհեղահոգի քահանան զՏէր Մուքայէն եւ որդիքն զՍարգիսն եւ զնորին կողակիցն զՀովիտիմէն եւ որդիքն զԳրիգորն, Յակոբջանն, Հունդու-

բէկն, Յարութիւնն եւ զդստերքն Խաթունն, Խանիարին յիշեցէք: Դարձեալ յիշեցէք ի Յիսուս Քրիստոս զՏէր Մուքայէն՝ եւ զորդին զՓիլիստանն եւ զկողակիցն զՄարիտանն եւ զդուստրն զԳուլարն եւ զմիւս կողակիցն Ազիզիաշէն եւ զորդին Աստուածատուրն եւ զդուստրն զԼէյլիսանն յիշեցէք:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՏէր Մուքայէն եւ զդուստրն իւր զԽանիարին եւ զորդին Յակոբջանն եւ զհանդուցեալն զԿարապետն յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք. ամէն:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս եւ զմիւս դուստրն զՍառաթաթունն եւ զնորին դուստրն զՆաթէլիսաթունն եւ զորդին Ազիզիմէն եւ զդուստրն զԽաթունաշէն յիշեցէք: Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զՏէր Մուքայէն եւ զմիւս դուստրն զԹաղումաշն եւ կողակիցն Յեարվէլին յիշեցէք: Դարձեալ յիշեցէք եւ զմիւս դուստրն զԳեազվարսուտանն եւ զդուստրն իւր զԽո(ս)րովուլստն եւ զմիւս դուստրն Անթառամն եւ զորդին Վարդանէան եւ զհանդուցեալն զԳրիգորն եւ Միրզախանն եւ զդստերքն զՄարիտանն եւ զՓարիզտանն եւ զՀովիտիմէն յիշեցէք: Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զանյիշատակ Թաղումաշն քանց հող հնազանդ, որ բազում աշխատանք ունի իւր հօր տանն վրայ եւ ի վրայ սուրբ աւետարանիս անարատ պահելով զսա: Եւ որք հանդիպիք սմա, լի սրտիւ աներկ մտօք, անկեղծ հաւատով Աստուած ողորմի ասացէք մարմնաւոր անյիշատակ Թաղումաշին, զոր սուրբ աւետարանս է հողեւոր յիշատակ իւր հոգոյն եւ ծնողաց իւրոց յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք եւ Աստուած ձեզ եւ մեզ ողորմեսցի ի միւսանգամ գարտեան իւրոյ. ամէն. Հայր մեր որ»:

2. Էջ 262.
 «Քրիստոս գթած եւ ողորմած, Քրիստոնէից Տէր Աստուած, Զողորմութեան քո զգուռն բաց, Լո՛ւր տառապեալ քրիստոնէեաց, Յամեն զիմաց ենք մեք նեղած, Եւ ամէն ազգաց կոխան եղած, Եկեղեցիք բազում քակած, Բազում խաչեր է խորտակած, Գիրք եւ աւետարան գերի տարած, Կանայք եւ տղայք գերի վարած, Գիշեր, ցերեկ կամք վարանած. է սա ամենն ի մեր մեղաց,

որ բարկացար Հայոց ի թվականիս Հայոց ՌԾԵ (1606), ի ժամանակիս, որում Շահապաս արքայն Պարսից եկեալ պաշարեաց զԹարվեզ եւ կոտորեաց զգաւրս Տաճկաց, քանզի գնացեալ էին Ալի փաշայն եւ ամեն զաւրավարքն Թարվիժոյ, Նեղչըւանա (Նախիջևան) եւ Երէվանա ի վերայ Ղալիբէկին ի Սարմաստ եւ ի դառնալն նոցա զամենեան զնոսա սրախողխող արարեալ. եւ բազումք ի քրիստոնէից անդ կոտորեցան եւ առեալ զքաղաքս Թարվիժոյ եւ անցեալ գնացեալ էաւ զՆեղչըւան եւ անցեալ գնաց ի յերեւան եւ պաշարեաց զնա ամիսս Թ. եւ ի հարկի կացուցեալ էաւ զքաղաքն. բայց չէ փոյթ երկարել մեզ զպատմութիւն մարտի պատերազմիս այսորիկ: Այլ եկեսցուք ի Թարվիժ եւ ասացուք փոքր ի շատէ զնեղութիւն եւ զչարչարանս քրիստոնէից ազգիս թէ զինչ եղեւ ընդ մեզ քան(զի) էլ հրաման ի յարքայէն թէ ով ոք աւժարե(ս)ցի, երթիցեն իւրաքանչիւր տեղիս իւրեանց. յայնժամ բազումք ի Հայոց եւ ի Տաճկաց զյուզի անկեալ ելեալ գնացին ճանապարհի զաւուրս Բ., իսկ անաւրէն պարոնայքն քուրթ ազգին զամենեանն զնոսա զայրսն կոտորեալ եւ զկանայսն եւ զտղայսն գերի արարին եւ զայն տեսեալ խեղճ եւ ողորմել(ի) քրիստոնէիցս ահի եւ երկիւղի կայեայք ի տուէ եւ ի գիշերի: Եւ լայեայք հայրք եւ մայրք եւ մայրք (ա՛յսպէս) ի վերայ որդոց եւ զաւակաց մերոց միշտ եւ հանապազ վտար անկեալ կայեայք թէ (զի՛նչ) լինելոյ եմք. յայնժամ ողորմած եւ մարդասէրն Աստուած որ ո՛չ կամի զմահ մեզաւորին, այլ զղառ(ն)ալ նորա, արկեալ զուրթ ի սիրտ արքային տուեալ հրաման Հայոց թէ հայք ազատք են, բայց երթալոյ ուրեք-ուրեք հրաման չկայ. կացցեն աստ մինչ ի գարուն. եւ յորժամ ի մարտ ամիսն մտանիցեն, ամենեքեան ելեալ գնացցեն ի Շաւշ քաղաքն, որ կոչի Ասոլայան (Սպահան). յայնժամ տառապեալ ազգս Հայոց զայն լուեալ, ուրախացաք ուրախութիւն մեծ եւ փառս տուեալ Աստուծոյ աւրհնեցաք զարարին մեր: Եւ յորժամ եղեւ գարուն, ել հրաման արքայէն զի զազգս Հայոց ի թիւս առցեն զայրսն եւ զկանայսն, մանաւանդ զտղայսն եւ զազգիւնս մինչեւ ըստընդեա մանկունսն եւ բերին զազգս Հայոց ի յԱսպահան, բայց ազգն Պարսից ո՛չ սիրեն զազգս մեր այժմ այսպէս: Այժմ ասացուք թէ զինչ եղեւ սոս այլ ամէն Այժմ ասացուք թէ զինչ եղեւ սոս այլ ամէն ազգս Հայոց. եղեւ հրաման արքայէն զի եր-

թիցեն, գերեցեն զտուես Հայոց զԿառս (Ղարս), զՇիրակունիս, զԱրծի, զԱրճէշ, զԵրզրի, զՍնուս, զԵրեւան, զՆախիջուան, զՋուղայ, զԱղբալ, զՍաղամաստ եւ գնացեալ գերեցին եւ զբազումս սրախողխող արարին եւ գերեցին եւ զայս տեսեալ խաւարեալ աչաց մերոց ի խոր խոցոտի, գալարի եւ խարշատի աղիք մեր այս ամէն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց, բայց զճար չունիմք քան զՔրիստոս փառք Աստուծոյ հազար բերան: Արդ ի վերջին ժամանակիս նորոգեցաւ սուրբ աւետարանս ի թվին Հայոց ՌԾԵ (1606)ին, ի թագաւորութեան Շահապազին, ի հայրապետութեան Էջմիածնայ Տեառն Դաւիթ կաթողիկոսին: Յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք բարեմիտ եւ հեղահոգի Տէր Միքայէլ քահանայն եւ կողակիցն Նսեֆին եւ որդոցն Սարգսին եւ Փիրապանին եւ զդստերացն եւ զարեան մերձաւորսն իւր ամէն: Դարձեալ յիշեցէք զպարոն Յակոբճանն եւ զծնողսն իւր զհայրն ուստայ Մկրտիչն, զմայրն Գաւհար սուլթանն եւ զկողակիցն իւր զՍուլթան Խանունն, որ ետ նորոգել զսուրբ աւետարանս... (պակասում է) ի տուրս բարեաց ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոցս առհասարակ ողորմեսցի Քրիստոս Աստուածն մեր ի միւսանգամ գալլստեան իւրում ամէն: Արդ (չորս տող անընթեռնի):

3. Էջ 68. «Զվերջին ստացող սուրբ աւետարանիս զՏէր Մուքայէն եւ զհայրն իւր զՏէր Յակոբն եւ զպապն իւր զԽոճա Ամիրունն եւ զնորին հայրն զԽոճա Մուքայէն յիշեցէք: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՏէր Մուքայէն եւ նորին կողակիցն զՆսէֆսաթունն եւ զորդիքն զՍարգիսն եւ զՓիլիստանն եւ զդուստրն անյիշատակ Թաղումաշն յիշեցէք»:

4. Էջ 187բ. «Զվերջին ստացող սուրբ աւետարանիս յիշեցիք ի Քրիստոս զՄուրատն, զԻսուտախն, զմայրն իւր Ազիզն եւ զորդիսն իւր Ասայտուրն, զԱստուածատուրն եւ զկողակիցն իւր զՀանձրեւարդն, զԽաթունիկն եւ զՀեղինարն, որ զաւետարանս ազատեցի եւ զՀեղինարն, որ հալալ ընչիցն ի իւրոց եւ որ գերութեւէ: Ի հալալ ընչիցն ի իւրոց եւ որ հանդիպիք աւղորմի ասէք եւ Աստուած ձեզ ազմեախի (ողորմեսցի) իւր մուս անգամ գալլստեան. յամէն: Ի թվականիս Հայոց ՌԻԹ (1680):

Ո՛վ եղպարք, ով ոք հանդիպիք սուրբ աւետարանիս, յիշեցէք ի մաքրապիսյլ աղաթս ձեր զՄարտիրոս քահան (քահանան)

և զմայր իւր Փարիխայն, և զկողայկիցն իւր Վայդիաթուն, որ բազում աշխատանք ունին ի ժամս ազատման սուրբ աւետարանիս և զիս անախտանս և անարժան Միքայէլ երէցս, որ անվանս չեմ արժան. ով ոք հանդիպիք միոյ բերան ողորմի ասէք և Աստուած ձեզ ողորմի իւր մուս անգամ դարտեան, որ Դ. Փլ. խլառքն կէր (պարտք էր) մնացած ես տվի (չի կարդացում) ով ոք ողորմի ասէ, ողորմածն Աստուած ողորմնէս (ողորմեացէ) իւրն. ամէն:

Դարձեալ յիշեցէք զՄիքայէլ երէցն և զծնաւորսն իւր Տէր Ակոր քահանան և զԹաուղումաշն որ զսուրբ խաչն աւետարանիս շինել էսուր. ով ոք յիշէ, յիշեալ լիցի ի Բրիտտոսէ. ամէն»:

5. Էջ 109թ. «Սուրբ աստուածայիսուս աւետարանս, որ ըստացայ ես Կարապետս իմ հալալ վաստակաւն իմօվ որ լինի շատակ (յիշատակ) ինձ. արդ երեսանկեալ աղաչեմ ի սուրբ աւետարանիս ընթերցողացը յիշեցէք. ի մաքրայիտայ աղօթս ձեր զմեղայարդ Կարապետս և իմ կողայկիցն Սարալուն և հոգեորդին իմ Որդայնանըն և կողակիցն Սուփրանէն և որդիքն Վարդանըն և Կարայպետն և զուրք յիշեալ լիջիք առաջի անմահ գառին Աստուծոյ. ամի, Տեառն ՌՆՃԼԻՆ (1830):

Արդ ես Սարալալուն այս սուրբ աւետարանս անձեցի (յանձնեցի) թոռին իմոյ Կարապետին որ է անուն կենակցին իմոյ և նա պարտայիկան է ինձ և իմ կենակցին իմոյ Կարայպետին անդար (°) յիշատակել»:

Թէիրան:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

ՆՈՐԱԳԻՆՑ ՏՇՊՆԵՐՔԵՐ ԳԼՈՎԻՐԻՐ
ՄԷԶ

Անցեալ տարի, Պրովիդիւի (Բուլղարիա) «Թէփէ Ալթը» թաղամասին մէջ, բուլղարական «Յաքիմ Կրուել» վարժարանի հիմնարկէքին առթիւ կատարուած պեղումներու ընթացքին երեւան հանուած են զոյգ մը տապանաքարեր հայերէն լեզուով: Ասոնք մնացորդներ են Հայոց հին Գերեզմանատունէն, որ գոյութիւն ունեցած է նոյն վայրին մէջ հարիւրաւոր տարիներ առաջ: Արձանագրութիւնները զոր քաղած եմ տեղւոյն վրայ, Բուլղար Աղգ. Թանգարանի տնօրէն Պ. Տիմիթր Յոնչիւի հրահրով, կը ներկայացնեմ ստորեւ.

1. Այս է տաքան Շուոթեցի Պետրոսի Որդի Յայրապետին որ փոխեցաւ առ Բրիս(տոս) † ԲՎԻՆ ՌՃԽԳ (= 1694):

2. Այս է տաքան հա(ն) գատեան Ֆիլպեցի Եասայ հաթուհին որ փոխեցաւ ԲՎԻՆ ՌՄԻԶ.ԻՆ (= 1777) Օգոստոսի ժ.Բ.ԻՆ:

Ասոնցմէ առաջինը թուականով կը հանդիսանայ հնագոյնը Պրովիդիւի տապանաքարերուն: Անոր արձանագրութեան երրորդ տողին սկիզբը նկարուած է խաչանիշ մը՝ եկեղեցական սաղաւարտի խաչը յիշեցնող, ինչ որ կասկածիլ կու տայ Հանդուցելոյն հոգեւորական մը ըլլալուն, թէեւ այդ բանը հաստատող ուրիշ նշաններ գոյութիւն չունին: Այս տապանաքարերը այժմ փոխադրուած են տեղւոյս Բուլղար Աղգ. Թանգարանը, ուր կը պահպանուին ուրիշ երկու հայկական տապանաքարեր ևս, աւելի առաջները բերուած նոյն թաղամասէն: Կու տանք անոնց ալ արձանագրութիւնները.

3. Այս է տպն. հանգըստին. Շուոթեցի Ավագ. Կին. Ողորմելի Յոուսիսիին Որ փոխեցաւ առ Յիսուս փկչն ՌՄԼ (= 1759) Հայոց ԲՎԻՆ. Ի յամ(ս)ինն. Յուսիսի ժէին:

4. Այս է տաքան Հանգստեան Շուոթեցի Բարսեղի Դուստր Սարուհ

Ի. որ փոխեցաւ ԹՎԻՆ ՌՄԻԸ (= 1779)ԻՆ Մայիսի Ի.ԻՆ:

Պրովիդիւի այս նորագիւտ տապանաքարերու կարգին աւելորդ չըլլայ թերեւս յիշատակել զոյգ մը ուրիշներ ևս, որոնք նոյնպէս բերուած են հին հայ Գերեզմանատունէն ու կը պատկանին ժէ. դարու վերջերուն: Ասոնցմէ մին քառանկիւն պարզունակ տապանաքար մըն է, անինամ արձանագրութեամբ, զոր յիշատակած է նաեւ Յ. Բիւրտեան (Բագմավէպ, 1929, էջ 80): Ան ներկայիս կը գտնուի Ս. Գէորգ Եկեղեցոյ աջակողմեան պահարանի արտաքին դրան կից ու կը ծառայէ որպէս պատուանդան Բալկանեան և Համբերոպական պատերազմներու զոհերու Յիշատակարանին: Արձանագրութիւնն է՝

5. Այս է տապանըս Թօխատցի Մեծատուրի Որդի Արախամին որ փոխեցաւ առ Ած ԹՎԻՆ ՌՃԽԶ (= 1697):

Այլապէս ուշագրաւ արձանագրութիւն մը կը կրէ միւս տապանաքարը, որ ըլլալով խոշորագոյնը իր տեսակին մէջ, երկար տարիներէ ի վեր որպէս «Հանգստեան քար» կը ծառայէ Հայոց այժմու Գերեզմանատան մէջ: Բերուած է նոյնպէս նախկին Գերեզմանոցէն: Յաւալի կէտն այն է որ արձանագրութիւնէն կարեւոր մասեր անընթեռնի կը մնան, ժամանակը մեծ չափով գործած ըլլալով իր աւերը անոր վրայ: Հաղիւ կարելի եղած է կարգալ հետեւեալը՝

6. Ամեհահաս բանն Արարչին Որ տեւէ մինչ յաւուրս վերջին (Հ)բաման սաստիկ ըստ վրերոյն Դառն ախամայ... Եեհակոյտեալ կմախբ սմին Հառի... դասակնիք ... Մահտեսին Որդի Մահտեսի Պէլրդատցի գոլով սըմին Բայց աստ քաղեցաւ ողորմագին Ապրս որդի մեծ Չելեպին Շինեալ տաքարս մեր Ազգին Շիրիմն աստ է ունայն շիրիմ Այլ ընկալցի միշտ յողորմութեան Ամին: Ինչպէս կը հասկցուի պահպանուած մասերէն, արձանագրութեան մէջ յիշատակութիւն չըլլար թուականի մասին: Կասկածէ չուրս է սակայն որ ան կը պատկանի Պրովիդիւի Ս. Գէորգ Եկեղեցոյ մեծ բարերար Պել-

կրատցի Ապրոյ Չելեպի մերձաւորներէն՝ թերեւս ալ դաւակներէն մէկուն: Ինքը՝ Ապրոյ Չելեպի թաղուած է 1676ին Ա. Պոլսոյ մէջ (Բագմավէպ, 1926, էջ 42), մինչ իր որդիներէն Մատթէոս Չելեպի, որ իր հանգուցեալ հօր խոստումն իրագործողն եղած է՝ Եկեղեցոյն շինութեամբ, վախճանած է 1695 աստեաները:

Այս տապանաքարը քանիցս տեղափոխութեան ենթարկուած է, իր խոշորութեանը համար. յարմարագոյնն ըլլալով իբր «հանդըստեան քար», ինչպէս այժմու, նոյնպէս և անցեալին՝ Գերեզմանատուններուն մէջ:

Նկատելի է որ Պրովիդիւի հայ գաղութը անցեալին մէջ, մինչեւ ասկէ 70 տարի առաջ, ունեցած է երկու Գերեզմանոցներ, մին՝ Եկեղեցոյ շրջափակին մէջ, ուր կը հանդիպինք ցարդ՝ ժամանակի ընթացքին սրբուած տապանաքարերու մնացորդներու, իսկ միւսը՝ որպէս պաշտօնական Հայոց Գերեզմանատուն՝ վերայիշեալ «Թեփէ Ալթը» թաղամասին մէջ: Եկեղեցոյ շրջանակին մէջ կը թաղուէին հարուստ և բարեկեցիկ դասակարգին պատկանող տեսակ մը «առանձնաշնորհներ», ատենին ազնուականութիւնը, իսկ հասարակաց Գերեզմանատան մէջ աղքատ դասակարգը՝ առանց ո և է վճարման: Պեղումներու ընթացքին գտնուած են նաեւ քարէ դամբարանի մը կախարիչը և պարզուկ տապանաքարը Մարիա կոչուած բուլղար կաթոլիկ կնոջ մը՝ լատինական արձանագրութեամբ՝ ԺԹ. դարու կէսէն: Այս վերջինս կը բացատրուի անով որ Հայոց պատկանող այդ Գերեզմանատունը կը գտնուէր «Թեփէ Ալթը» արուարձանին դէպ ի նախկին «Պաղիկեան թաղը» տանող ճամբուն վրայ: Ան Հայոց սեփականութիւնը եղած և իբր Գերեզմանատուն ծառայած է Հայոց աւելի քան երկու դար, սկսելով 1673ի Կամենիցի գաղթականութեան օրերէն մինչեւ քաղաքին Ռուս բանակին կողմէ գրաւումը՝ 1878 Մարտ 6, Ունեցած է 1414-90 քառ. մետր տարածութիւն, չէնքով մը միասին որ կառուցուած է 135-55 քառ. մետրի վրայ: Ժամանակի ընթացքին, տեղւոյ Աղգ. իշխանութիւնը՝ հակառակ Կ. Պոլսոյ Պատրիարքարանի խիստ արգելքին՝ վաճառած է զայն՝ եկեղեցապատկան ուրիշ շորս կալուածներու հետ, քիչ մը աններկի փութկոտութեամբ, ինչպէս ցոյց կու տան Եկեղեցոյ Դիւանին մէջ գտնուող 17 և 18 թիւ զոյգ մը վկայագրերը: